

Հ Ա. Խ Ա. Տ Ք

Լ Ե Թ Ն Ե Ր Ի Պ Ա Հ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Մուաւ, Քափաս և Պանտ, ինչպէս և միքանի ուրիշ լեռներ, որ այժմ բաւական ուխտատեղիներ ունին իրենց վերալ, հեթանոսաւթեան ժամանակ պաշտուելիս են եղել։ Սրանց մասին անշուշտ աւանդութիւններ եղել են, սակայն ինձ յաջողուեց միայն մինը զտնել, որ հետեւեալն է։

Մի ժամանակ Քափաս լեառը այնքան բարձր է եղել, որ իւր ստուերով ամբողջովին ծածկել է Գանձակ քաղաքը։ Սրավալ սաստիկ նախանձել է Մուաւ լեառը և առաջարկել նրան կուել։ Քափասը իսկոյն իւր նետը շպրտել է Մուաւի վրայ և կոտրել նրա ձախ կողքը, իսկ Մուաւը բարկութեամբ և նախանձով լցուած՝ այնպէս է տուել նրա դլխին իւր նետով՝ որ փշուր փշուր է եղել և թափուել վայր։

ՔԱՐԻ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

Գաւառում կան մի քանի ժայռեր և քարեր, որոնք սուրբ են Համարւում և որոնց առաջ ժողովուրդը մոմեր վառելով, մի որեւէ հիւանդութիւնից բժշկութիւն և կամ մի այլ շնորհ է խնդրում։ Սրանց թիւը այժմ բաւական փոքր է և եղածն էլ հետզհետէ մոռացութեան են տրում։ Սրանց ամենանշանաւորը կարելի է Համարել «Ծծերը»։ Սա Նիւկար գիւղի մօտ, ձորի մէջ բարձրացող մի ապառաժ քերծ է, որի ստորոտով հոսում է մի առուակ։ Քերծի մէջ կայ մի քարայր, որի առաստաղից կախուած են մարդու, ոչխարի, կովի, խողի և այլ

կենդանիների ծծերի նմանութեան բիւրեղներ, որոնց ծալրերից ջուր է կաթկաթում և հաւաքում սրանց տակ գտնուած աւազանի մէջ: Կաթ չունեցող կանալք ուխտ են գալիս այս-տեղ, մոմեր վառում ծծերի առաջ, նրանցից կաթած ջուրը քսում իրենց ծծերին և խնդրում նրանցից իրենց ստինքի կաթը շատացնել:

Ոմանք էլ սակաւակաթ՝ կենդանիներին են բերում այսաեղ, նոյն կենդանու ծծերի նմանութիւնն ունեցող բիւրեղներից ջուր քսում նրանց ծծերին, որ կաթն աւելանալ:

Տեսդ ունեցող հիւանդներն էլ գալիս լողանում են այս սառն աւազանում և բժշկում, նախապէս մոմեր վառելով ժայռի առաջ:

Երքէճ գիւղի մօտ գտնուում է մի ահազին ժայռ, մէջտեղից ճեղքուած, որտեղից կաթ կաթ ջուր է կաթում: Առաւելապէս չիք չորեքշաբթի օրը շրջակայ գիւղերից ահազին բազմութիւն է գնում այդտեղ ուխտ: Մոմեր վառելով այդ ժայռի կրծքին, տակից հող են վերցնում և այդ կաթ կաթ թափուող ջրով շաղախելով քսում մկնատամի վրայ, որ առողջանալ:

Մի այսպիսի Մկնատամի խաչ կայ նաև Գետաշէնում, որ մի հասարակ քար է, բլրակի վրայ ընկած:

Բրաջրից Բանանց տանող ճանապարհի վրայ կայ մի ժայռ, որ կոչւում է «Ճնրտեղի խաչ». սա շատ զօրաւոր է համարւում և ամեն մի անցորդ անշուշտ գալիս և համբուրում է նրան:

Գետաշէնի մօտ, Քաջքաձորում¹⁾ կայ մի ահազին ժայռ, որի մէջ մի անցք կայ: Այս ժայռը կոչւում է Քաջքարուն. «կոխուած²⁾» երեխաներին տանում են այդտեղ և երեք անդամ անցկացնում այդ անցքով, որպէսզի «կոխն» անցնի:

Ոչ պակաս նշանաւոր են նաև Մուռութ գիւղում Ճահրեանի աղբիւրի մօտ գտնուած ժայռը և Ե. Սարգիսի վանքից փոքր ինչ բարձր, ձորակի մէջ ընկած ժայռը, որ ունի մի նեղ անցք: Վերջինս կոչւում է Կապ-խաչ: Ամուլ կանալք երեք անդամ անցնում են այդ անցքով, որպէսզի որդի ունենան:

¹⁾ Տես սատանաների մասում:

²⁾ Տես Տղաբերքում:

Բանանցի շրջականերում զտնուող Մեծ-Գոմերի խաչին ուխ են դնում աչքացաւ, Ոսկեթելին՝ փորացաւ, Սուրբ Նշանին՝ զլիսացաւ ունեցողները։ Իսկ ՚Փիրանաւորի խաչի ժայռի միջով անց են կացնում այն երեխաներին, որոնք ուշ են ոտելնում։

՚Փիրունիներն ասում են, թէ իրենց մանկութեան ժամանակ միմեանց դրամ փոխ տալիս այս սուրբ Համարուած քարերի առաջ էին տալիս և նրանց վկայ բռնում։

Փողովուրդը պաշտում է նաև կայծակի հարուածին ենթարկուած քարերը, ինչպէս օրինակ Միրզիկ գիւղի Խաչ-աղբիւրից փոքր ինչ բարձր զտնուած «կեծաքարը»։

ԶՐԻ ՊԱՀՏԱՄՈՒՆՔ

Դեռ մինչև այժմ էլ մնում են ջրի պաշտաման մնացորդներ, դեռ մինչև այժմ էլ ժողովուրդը սուրբ է Համարում միքանի աղբիւրներ, նրանց մօտ է ուխտ դնում, մոմեր վառում, աքաղաղ մատղում, ՚Իրենց հիւանդութիւններից բժշկութիւն հայցում։

Այսպիսի աղբիւրներից նշանաւոր են.

Միրզիկ գիւղում «Խաչ-աղբիւրը», որ պաշտում է որպէս մկնատամ հիւանդութեան բուժիչ. այստեղ առաւելապէս բերում են մկնատամ հանած երեխաներին, մոմեր վառում աղբիւրի առաջ և երեխալին լողացնում այդ սառն ջրով։

Բրաջրում «Քոսի (բորոտի) աղբիւրը» առողջութիւն է պարզեւում բորոտներին, որոնք նոյնպէս մոմեր վառելով նրա առաջ՝ լողանում են։ Այս աղբիւրի մասին աւանդութիւնն ասում է, թէ մի կռապաշտ բորոտութեան ախտով բռնուած հալածում է իւր բարեկամներից և ծնողներից ու անխնամ ընկնում այս աղբիւրի մօտը։ Երկար տանջուելուց յետոյ մի ծերունի երեւում է նրան և ասում. Խոստացի՞ր քրիստոնէութիւն ընդունել և կը բժշկուիս։ Երբ այս կռապաշտը խոստանում է, ծերունին դաւազանով խփում է ժայռին և խկոյն ալժմեան աղբիւրը բղխում է։ «Լուացուիր այս աղբիւրում և կատարի՞ր խոստումգ», ասում է ծերունին և անյալտանում։ Հիւանդը